

## **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/9**

**7 փետրվարի 2017թ.**

Քննարկվեց Ա/Ձ Ամայա Բիչախյանի դիմումը սխալմամբ ՀԴՄ մուտքագրված գումարն իրացման շրջանառությունից նվազեցնելու վերաբերյալ:

#### **Ա/Ձ Ամայա Բիչախյանի դիմումում բերված փաստարկները.**

Ա/Ձ Ամայա Բիչախյանը հայտնում է, որ 19.12.2016թ. խափանվել է իր կողմից շահագործվող ՀԴՄ-ն, որը ներկայացվել է Գյումրու ՏՀՏ՝ նորոգելու համար: Արդյունքում պարզվել է, որ 2015թ. 1-ին եռամսյակում ՀԴՄ-ով գրանցվել է անհնարին գումար՝ 33334441383 դրամ: Նշված գումարը, որի մասին Ա/Ձ Ամայա Բիչախյանը տեղեկացել է իրեն ուղարկված թիվ 2111/2016 արձանագրությունից, մի քանի տասնյակ անգամ գերազանցում է իր ապրանքային մնացորդը:

Ելնելով վերոգրյալից, Ա/Ձ Ամայա Բիչախյանը խնդրում է 33333335283 դրամը համարել անվավեր, քանի որ դա միայն թյուրիմացության արդյունք է:

#### **ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ 19.12.2016թ. խափանվել է Ա/Ձ Ամայա Բիչախյանի կողմից շահագործվող ՀԴՄ-ն, որը ներկայացվել է Գյումրու ՏՀՏ՝ նորոգելու համար: ՀԴՄ-ի ֆիսկալային տվյալները հանելու ժամանակ պարզվել է, որ 2015թ. 1-ին եռամսյակում ֆիսկալային հասույթը կազմել է 33334441383 դրամ, ինչը տեղի է ունեցել 16.01.2015թ. սխալմամբ ՀԴՄ 33333335283 դրամ գումար մուտքագրվելու հետևանքով: Սակայն, քանի որ չի պահպանվել նշված գումարի կտրոնը, ինչպես նաև 2015թ. 1-ին եռամսյակում սխալմամբ ՀԴՄ մուտքագրված գումարի մասին Ա/Ձ Ամայա Բիչախյանը տեղեկացել է միայն 2016թ. դեկտեմբեր ամսին, ուստի նա չի կարողացել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգով և ժամկետում լուծել առաջացած խնդիրը: Մասնավորապես, ՀՀ կառավարության 26.03.2015թ. թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների 19-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն. «Դրամական հաշվարկների կատարման ընթացքում սխալմամբ մուտքագրված գումարների գրանցման դեպքում, եթե սխալը հայտնաբերվել է գնման կտրոնի փակումից հետո մինչև օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումը, ապա սխալ գրանցումից անմիջապես հետո սխալ գումարով տպված կտրոնի հիման վրա լրացվում է գումարների՝ սխալմամբ գրանցման ակտը՝ համաձայն N 6 ձևի, և ՀԴՄ-ի միջոցով կատարվում է վերադարձ՝ տպվելով վերադարձի կտրոն: Այն դեպքում, երբ սխալը հայտնաբերվել է օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումից հետո, լրացվում է սխալմամբ գրանցված գումարների ակտը. տվյալ դեպքում վերադարձի կտրոն չի տպվում.

...

7) կազմակերպությունները, յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 25-ը ներառյալ՝ յուրաքանչյուր ՀԴՄ-ի համար իրենց հաշվառման վայրի հարկային տեսչություն են ներկայացնում տվյալ ամսվա ընթացքում կատարված չեղյալ համարման, վերադարձի և գումարների՝ սխալմամբ գրանցման մասին տեղեկանք՝ համաձայն N 7 ձևի.»:։

Քննարկվող դեպքում Ա/Ձ Ամայա Բիչախչյանը չի կարողացել օգտվել ՀՀ կառավարության 26.03.2015թ. թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններով նախատեսված ընթացակարգի դրույթներից:

Միննույն ժամանակ, Ա/Ձ Ամայա Բիչախչյանի կողմից 33333335283 դրամ գումարը սխալմամբ մուտքագրված լինելու մասին է վկայում այն հանգամանքը, որ 2015թ. և 2016թ. ընթացքում իրացման շրջանառությունները կազմել են, համապատասխանաբար՝ 4.816.000 դրամ և 2.152.101 դրամ:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ Ա/Ձ Ամայա Բիչախչյանի կողմից նշված գումարը ՀԴՄ է մուտքագրվել թյուրիմացաբար, այն մեխանիկական սխալի արդյունք է, հետևապես սխալմամբ մուտքագրված գումարը, ըստ էության, չի կարող հիմք հանդիսանալ վերոգրյալ գումարը Ա/Ձ Ամայա Բիչախչյանի իրացումից հասույթի ընդհանուր գումարի մեջ ներառելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### ո թ ո շ ու մ է՝

Ա/Ձ Ամայա Բիչախչյանի դիմումը՝ սխալմամբ ՀԴՄ մուտքագրված գումարն իրացման շրջանառությունից նվազեցնելու վերաբերյալ, բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ